Աղավնի Սերյոժայի Մադոյան

Ծնվել է 30.08.1988թ.-ին Լոռու մարզի Օձուն գյուղում:

1995-2005թթ. սովորել է Լոռու մարզի Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2007-2012թթ. սովորել է Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում (ԲՈՒՀ-ը 2015 թ.-ին միավորվել է Գ.Վ.Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանի հետ):

2012-2013թթ. սովորել է Փաստաբանական դպրոց հիմնադրամում:

06.10.2013թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ:

30.06.2020թ.-ին մասնակցել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին և 03.07.2020թ.-ին ընդգրկվել նշված գործառույթներն իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում:

02.09.2020թ.-ին Արդարադատության ակադեմիայում ավարտել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:

28.10.2013-20.05.2014թթ. աշխատել է Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

01.07.2014-04.07.2019թթ. աշխատել է «Օրենք և Իրավունք փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

04.07.2019թ.-ից Գլխավոր դատախազի հրամանով նշանակվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ: Նույն հրամանով շնորհվել է երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Գլխավոր դատախազի 26.05.2020թ. թիվ 148-Ա հրամանով պաշտոնեական պարտականություններս գերազանց կատարելու համար արժանացել է խրախուսանքի:

Ամուսնացած չէ:

Արթուր Աղամալյան Սպարտակի

Ծնվել է 06.09.1972թ.-ին ՀԽՍՀ Կիրովական քաղաքում:

1979-1989թթ. սովորել է Ա.Ս.Պուշկինի անվան ռուսական միջնակարգ դպրոցում:

24.08.1989-08.08.1991թթ. աշխատել է Կիրովական կապի արտադրական միավորումում:

1991-1993թթ. ծառայել է Զինված ուժերում:

1993-1998թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:

19.10.1998-23.02.1999թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության ներման հարցերի խմբի առաջին կարգի մասնագետ:

23.02.1999-11.07.2000թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության քաղաքացիության, պարգևների և կոչումների հարցերի խմբի առաջատար մասնագետ, ապա 11.07.2000-19.07.2001թթ.՝ նույն վարչության նույն խմբի գլխավոր մասնագետ:

01.08.2001-30.04.2005թթ. աշխատել է «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

07.11.2005-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես գրասենյակի պետ:

01.01.2008-18.04.2009թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմում՝ որպես գրասենյակի պետ:

18.04.2009-10.01.2012թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

10.01.2012-13.01.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայությունում՝ որպես ավագ մասնագետ:

13.01.2015-01.09.2016թթ. աշխատել է «Սևանի Իշխան» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան, ապա 01.09.2016-31.03.2017թթ.՝ որպես բաժնի պետ:

24.08.2017-18.02.2019թթ. աշխատել է ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

15.05.2020-03.08.2020թթ. աշխատել է ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում՝ որպես իրավաբան:

11.12.2020-01.02.2022թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2012-2020թթ. ընթացքում 9 անգամ որպես միջազգային դիտորդ տարբեր երկրներում մասնակցել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի (OSCE ODIHR) և ԸԴԿԵՑ-ի (ENEMO) ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների կազմում:

Մասնակցել է հետևյալ ակադեմիական և մասնագիտական դասընթացների.

1. ՀՀ-ում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցերի գիտաժողով-եվրոպական միության խորհրդատվական խումբ՝ 2012 թվական:
2. ՀՀ-ում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցերի դասընթացներ-եվրոպական միության Թվինինգ ծրագիր՝ 2012 թվական:
3. «Միջազգային-տնտեսական մարտահրավերներ և զարգացման քաղաքականություն» ծրագիր-Հնդկաստանի ԱԳՆ-ի ITEC/SCAAP՝ 2013 թվական:
4. «Զարգացնող երկրների կառավարությունների պաշտոնյաների միջմշակութային հաղորդակցություններ» ծրագիր-Չինաստանի առևտրի նախարարության՝ 2013 թվական:

2012-2014թթ. հանդիսացել է «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով «Տղամարդիկ ընդդեմ ընտանեկան բռնության» նախաձեռնության համահիմնադիր և դասավանդող:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի 2 զավակ:

Արտյոմ Սարգիսի Մանասյան

Ծնվել է 20.03.1994թ.-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2000-2008թթ. սովորել է Շիրակի մարզի Եղիշե Չարենցի անվան Գյումրու թիվ 25 միջնակարգ դպրոցում:

2008-2010թթ. սովորել և ավարտել է Շիրակի մարզի Հովհաննես Թումանյանի անվան Գյումրու թիվ 3 ավագ դպրոցը:

2011-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2015 թվականին անցել է պրակտիկա Շիրակի մարզի դատախազությունում: 21.10.2014-31.08.2017թթ. աշխատել է «Մարգիս Մանասյան» ՍՁ-ի փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավախորհրդատու:

2016-2017թթ. մասնակցել է հաշվապահության դասընթացների:

01.09.2017-03.11.2018թթ. աշխատել է Շիրակի մարզպետարանի իրավաբանական բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

18.12.2018-12.11.2019թթ. աշխատել է ՀՀ դատախազության Շիրակի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնում՝ որպես պետի պաշտոնակատար:

2019-2020թթ. սովորել է Փաստաբանական դպրոցում:

27.06.2020թ.-ից առ այսօր հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

17.08.2020-05.01.2022թթ.-ին աշխատել է Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական:

Ամուսնացած չէ:

Լիլի Մամիկոնի Դրմեյան

Ծնվել է 16.11.1995թ.-ին Երևան քաղաքում:

2002-2010թթ. սովորել է Երևանի թիվ 116 միջնակարգ դպրոցում:

2010-2013թթ. սովորել է Երևանի «Քվանտ» վարժարանում:

2013-2017թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2017-2019թթ.՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

10.08.2018-28.09.2018թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես նախագահի օգնական:

16.11.2018-20.12.2018թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

20.12.2018-02.04.2021թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես նախագահի օգնական:

02.04.2021-05.08.2021թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

05.08.2021թ.-ից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Մասնակցել է հետևյալ սեմինարներին և դասընթացներին.

The European Law Students Association Day Workshop on Access to Justice

ԵՊՀ, Երևան, 29.11.2017թ.

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ դատավորի օգնականների և գործավարների համար դասընթացներ՝ Դատական ակտ կազմելու լեզվական հմտություններ, Իրավունքի մեկնաբանության կանոններ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների որոնման հմտություններ թեմաներով

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի և Դատական դեպարտամենտի 2020-2022 թվականների համատեղ գործողությունների ծրագրի շրջանակներում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներ:

Հեղինակ է հետևյալ գիտական հոդվածների՝ «Ստույգ փաստերի վրա հիմնված անվանարկման համար պատասխանատվության առանձնահատկությունները» ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու 1.4 (30), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019թ., «Երբ այլ դատարանի կամ արբիտրաժային տribունալի վարույթում առկա է նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ» ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու 1.6 (23), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017թ., «Խոսքի ազատության իրավունքի և հասարակական գործիչների պատվի և արժանապատվության պաշտպանության հարաբերակցությունը» ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու 1.4 (14), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016թ.:

Ամուսնացած չէ: